

ՀՀԱՅԿԵՐԸ ամսությի ՄՈԽԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՏԵՐՈՒ

№ 6.

ՏԻԿ. ՄԱՐԳԱՐԻՏ

# ԳԱՍՏԱՐԱՆՈՒՄ

Կոմիլիս մէկ արժանածով



891.995  
Մ-35

ԹԻՖԼԻՍ  
Եղիշեանաց. Օր. Ն. Աղանեանի. Պոլից. 7

1913

2011-02

ՀՀԱՅԱՍՏԱՆԻ ամսագրի ՄԱԿԱՍԱՐԱՆ ԹԱՏՐՈՆ

891.99 Մ.  
Վ-35

№ 6.

ԱԿ

ՏԻԿ. ՄԱՐԳԱՐԻՏ



# ԳԱՍՏՐԱՆՈՒՄ

100/  
9596

Կոմեղիա մէկ արարածով



Թ Ի Ց Լ Ի Ս  
Խըմբառապ. Օք. Դր. Աղանեանի, Պօլից. 7  
1913



ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Կոմեղիա մէկ արարւածով

ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Տեսուչ

Վարժուհի

Օննիկ, Մուշեղ, Յակոբ, Տիգրան, Աստղիկ, Շամիրամ՝ և ուրիշ աշակերտ—աշակերտուհիներ:  
Ժառայ

Բեմը ներկայացնում է դասարան: Աջ կողմում դռու,  
դիմացը լուսամուտներ: Սեղան և աթոռ ուսուցչի հա-  
մար, խորքում նստարաններ, սեղանի մօտ գրատախ-  
տակ: Պատերին զանազան նկարներ և քարտեզ:

### ՏԵՍՈՒՅԹԱՆ Լ.

ՄՈՒՇԵՂ. (զրքերը տեղատրելով) Դեռ վաղ է.  
ոչ ոք չի եկած: (Նայում է շուրջը) Վահ, Օննիկի  
զրքերը, նա արդէն եկել է: Եւ ի՞նչու չը դայ.  
ինձ էլ որ այնքան սիրեն ուսուցիչները, ես էլ  
շուտ կը դամ: Զեմ հասկանում թէ ի՞նչ են  
գտել նրա մէջ: Մի քիչ գեղեցիկ է զրում, այդ  
է էլի... Կարծեմ այսօր ես էլ վաս չեմ զրել:  
(Բաց է անում տեսրակը) Այս, ինչ մաքուր եմ  
զրել. սխալներ էլ շատ չը պիտի լինեն: Վերջա-

պէս պիտի կարողանամ հասնել այդ անպիտան Օննիկին: Երէկ վարժուհին տեսչի առաջ գովեց նրան, իսկ իմ տետրակի վրա այնպէս խեթ-խեթ նայեց: Ես տեսայ ինչպէս Օննիկը աչքի տակով ինձ էր նայում: Դասամիջոցին էլ Շամիրամի հետ ծիծաղում էին և իմ կողմը նայում: Ես ձեզ ցոյց կը տամ (բոռնցրով սպանում է օղի սէջ): Մի այնպիսի բան բերեմ ձեր գլխին: Դեռ տեսնեմ՝ Օննիկը ո՞ւր է..., (դուրս է զնում):

### ՏԵՍԱՐԱԿԻ Ա-

#### ԱՍՏՂԻԿ

ԱՍՏՂԻԿ. Օխայ, ամենից վաղ եմ եկել. դեռ ոչ ոք չը կայ: Երէկ վարժուհին ասաւ որ շուտով մեզ Զատկի տօներին արձակելու են: Մէկ ամիս էլ ու տարին կը վերջանայ: Ա՛խ, արգեօք կը փոխեմ դասարանս թէ ոչ: Ամենից շատ թւաբանութիւնից եմ վախենում (մօտենում է գրատախտակին եւ թւեր է հաշում):

### ՏԵՍԱՐԱԿԻ Բ.

#### ԱՍՏՂԻԿ Եւ ՄՈՒՇԵԴ

ՄՈՒՇԵԴ. (շտապով վազում է ղէսլի Օննիկի գրքերը, Աստղիկին չը նկատելով) Ուսուցչանոցում նստած տետրակներ է գարսում: Այդքան էլ երես կը տանի... Մի խայտառակիմ որ... (շտապով ըրթում է Օննիկի տետրակները): Զէ, սա չէ, սա էլ չէ... Ահա դասայ, անպիտանը որ-

քան մաքուր է գլուխ (վերցնում է գրիչը եւ ամբողջ տետրակը խազիսում). յետոյ դարձեալ տետրակը տեղն է ղնում եւ վազում ղէսլի լուսամուտը): Երանի ոչ ոք չը տեսնի ինձ... (Լուսամուտից դուրս է թուզում):

Ա.ՍՏՂԻԿ. (առաջ զալով) Վայ, այս ի՞նչ տեսայ. Մուշեղը կեղտուտեց Օննիկի տետրակը: Հիմա Օննիկը որ դայ, ի՞նչ անեմ: Բա չասե՞մ. տառւմ են՝ խաբար մի տայ, խաբար տալը լաւ բան չէ: Ի՞նչ անեմ ապա...

### ՏԵՍԱՐԱԿԻ Վ.

#### ԱՍՏՂԻԿ, ՏԻԳՐԱՆ, ՅԱԿՈԲ, ՇԱՄԻՐԱԱՄ

ՏԻԳՐԱՆ. Ես չասացի՞ որ դեռ շատ վաղ է, մեր ընկերները դեռ չեն եկել:

ՅԱԿՈԲ. Ոչինչ, մի անգամ էլ կը կրկնենք դասերս: (Դարսում են զրքերն եւ տեղատրում տետրակները):

ՇԱՄԻՐԱԱՄ. Բարեկ, Աստղիկ, տե՞ս, մեր ծաղիկները բացւել են: Այս փունջը վարժուհու համար է:

Ա.ՍՏՂԻԿ. (վազում բռնում է Շամիրամի ծեռքը) Ախ, որքան թարմ են ու հոտաւէտ (հոտ է քաշում):

ՇԱՄԻՐԱԱՄ. (Գրքերը ղնում է նստարանում): Գնանք, Աստղիկ: Ես ուզում եմ ծաղիկներիս վրա ջուր սրսկել: Աինչեւ վարժուհու դալը կարող են թառամել: (Հնում են: Տիգրանը եւ Յակոբը գրատախտակի վրա գրում են):

ՅԱԿՈԲ. Տես, այսպէս պէտք է բազմապատկել:

ՏԻԳՐԱՆ. Բոլորովին այդպէս չէ. գեռ գուշես հասկացել թէ ինչպէս պէտք է բազմապատկես: Տես, ահա այսպէս (զրում է):

ՅԱԿՈԲ. Ախ, այդ թւաբանութիւնը շատ գժւար է զլուխս մտնում: Ի՞նչ ես կարծում, մեր հասակից բարձր բաներ չեն հարցնում:

ՏԻԳՐԱՆ. Ինձ համար թւաբանութիւնը մի խաղ է, բայց քերականութիւնը ուղղակի հոգիս հանում է: Մայրիկս ասում է՝ մէկ որ հասկանամ—հեշտ է. բայց որ չեմ հասկանում ու չեմ հասկանում:

ՅԱԿՈԲ. Ապա Օննիկը ինչպէս ամեն առարկայի մէջ աջող է: Եթէկ վարժուհին գովեց նրան տեսչի առաջ:

ՏԻԳՐԱՆ. Իսկ Մուշեղը նկատեցիր ինչպէս էր նայում Օննիկին: Եթէ կարողանար, ողջող կուլ կը տար:

ՅԱԿՈԲ. Հազիւ էի ծիծաղս պահում, երբ Մուշեղին գուրս կանչեցին: Այսպէս շփոթւեց, գունատւեց, սկսեց կակագել... Աստղիկը հօ իշուր չէ նրան կակաղ կանչում:

ՏԻԳՐԱՆ. Ասենք Աստղիկն էլ մի բարի պըտուղ չէ. նա էլ խաբարբան է: (Դրսից լսում է Մուշեղի երգի ձայնը. Յակովն ու Տիգրանը վագում են լրամբուի մօտ):

ՅԱԿՈԲ. Վահ, Մուշեղ, այս ինչ վաղ ես եկել:

ՄՈՒՀԾԵՂ (լրասմուտի առաջ զալով) Ի՞նչ էք տաք սենեակում նստել: Դուրս եկէք: Տեսէք, ինչ արև է...

ՏԻԳՐԱՆ. Դասերս ենք պատրաստում:

ՄՈՒՀԾԵՂ. Որքան էլ պատրաստէք, դարձեալ հօ Օննիկին են գովելու, ձեզ չէ. (Ներս է թոշում եւ բռնելով ընկերների ծեռքերը կամացուկ ասում) Ես ձեզ մի հետաքրքրական բան եմ պատմելու Օննիկի մասին: Նա որ իրան ամենից խելօք և կարգապահ է ցոյց տալիս... Այսօր շատ վաղ եկայ գալրոց, մտայ դասարան. լուսամուտից ինչ եմ տեսնում: Այդ ձեր պատւական Օննիկը ծառն է բարձրացել, տակն էլ կանգնած է մեր ուսումնարանի ծառայի որդին, այն թմրած կարօն, ու չարչարում են թռչնի բունը ցած բերեն: Կարօն ներքելից օգնում էր, իսկ Օննիկը խոզանակի կոթով դուրս էր քաշում բռւնը: Ես դիտմամբ բարձր թխկթխկացրի. վախեցան թէ տեսուչն է, խոզանակը թողին, փախան...

ՅԱԿՈԲ. Ճշմարիտ:

ՄՈՒՀԾԵՂ. Ի հարկէ:

ՏԻԳՐԱՆ. Ապա Օննիկը ուր է այժմ:

ՄՈՒՀԾԵՂ. Մտել է ուսուցչանոց. սուտ Քրիստոսի պէս նստել, տետրակներ է դարսում:

ՅԱԿՈԲ. Էժան չի նստի այդ բանը Օննիկի վրա: Յիշում ես՝ տեսուշը ինչպէս պատժեց կարօին, որ քարեր էր ձգում ծառին:

ՄՈՒՀԾԵՂ. Օննիկը պիտի քանդէր թռչնի բունը ու յետոյ մեզ վրա դնէր. չէ՞ որ ամբողջ

ուսումնաբանում նրան խելօք են համարում.  
ով պիտի կասկածէր: Մենք պիտի պատժէինք:  
եկէք, որ այդպէս է, մենք էլ նրան մի լաւ  
պատճել տանք: Դեռ ոչ ոք չը կայ: Գնանք, ես  
ծառը կըբարձրանամ, իսկ դուք կօգնէք:

**ՏԻԳՐԱՆ.** Մեզ կարող են պատճել:

**ՄՈՒՇԵՂ.** Բայց չէ որ Օննիկը մեզ վրա էր  
դնելու և մեզ պատճել տալու: Այժմ բոլորս կա-  
սենք թէ տեսանք՝ ինչպէս Օննիկը քանդեց բու-  
նը: (Տղաները տատանում են): Եհ, վախկոտներ.  
սիրա չունէք, համ...

**ՅԱԿՈԲ.** Ո՞վ է վախկոտ (դուրս է թոշում  
լուսամուտից. Տիգրանն էլ ետեւից):

**ՄՈՒՇԵՂ.** Ախ, Օննիկ, մի պատիժ ուտեցնեմ  
որ... Այ թէ կը ծիծաղես (ինքն էլ դուրս է թոշում:  
Միւս կողմից լսում է երեխաների խմբական երգ—  
զարունքին նիրւած):

### ՏԵՍԱԲԱՆ V.

ԱՍՏՂԻԿ և ՇԱՄԻՐԱՄ

**ՇԱՄԻՐԱՄ.** Այսպէս աւելի թարմ կը մնան,  
մինչև վարժուհու գալը (ոսղում է ծաղիկները):  
ԱՍՏՂԻԿ. Երանի քեզ, Շամիրամ, կարող ես  
ծաղիկներ բերել վարժուհուն:

**ՇԱՄԻՐԱՄ.** Դրա համար ես տխրում: Ուզնում  
ես կէսը քեզ տամ, միասին կը տանք վարժու-  
հուն (զնում են լուսամուտի մօտ որ ծաղիկները կէս  
անեն):

**ԱՍՏՂԻԿ** (դուրս նայելով). Տես, տես, Շամի-

րամ, անպիտան տղերքը թռչնի բունը քանդում  
են:

**ՇԱՄԻՐԱՄ.** Արդէն ցած են դալիս: Խոզա-  
նակի կոթն էլ կոտրեցին: Վահ, Մուշեղը կախէ  
ընկել ծառից:

### ՏԵՍԱԲԱՆ VI

ՆՈՅՆԵՐ և ՄՈՒՇԵՂ, ՅԱԿՈԲ, ՏԻԳՐԱՆ.

**ՄՈՒՇԵՂ.** (դրսից) Թողէք ամեն բան թափ-  
թփած. Թող գան տեսնեն և Օննիկին պատճեն  
(պատուանով ներս է թոշում, միւսներն էլ նրա ե-  
տեփց: Աղջիկները մի կողմն են քաշում):

**Ա.ՍՏՂԻԿ.** Քիչ մնաց մեզ ոտքի տակ տայիք:  
ՄՈՒՇԵՂ. Հախտ կը լինէր, խաբարբզան:  
(Տղերքը անցնում են զրատախտակի ետեւ):

**Ա.ՍՏՂԻԿ.** Իսկ դու կակազ: Դեռ սպասի, քո  
օրդ կը տեսնեմ:

**ՄՈՒՇԵՂ.** Կը սպասեմ, ինչ ես անելու:  
**Ա.ՍՏՂԻԿ.** Բոլոր արածներդ մէկ մէկ պատ-  
ճելու եմ տեսչին:

**ՄՈՒՇԵՂ.** Խաբարբզան, խաբարբզան...  
ՏՂԱՆԵՐԸ. Խաբարբզան, խաբարբզան...  
Ա.ՍՏՂԻԿ. Սպասեցէք, մէկ ասեմ որ թռչնի  
բունը քանդեցիր:

**ՄՈՒՇԵՂ.** ասա, օրդ տես...  
ՏԻԳՐԱՆ. Ապա մի փորձիր...

**ՅԱԿՈԲ.** Տեսնենք ինչպէս ես ասում:  
**ՇԱՄԻՐԱՄ** և **Ա.ՍՏՂԻԿ.** կասենք, կասենք:  
(Տղաները ընկնում են նրանց ետեւից):

**ՄՈՒՇԵԴ.** (Հասնում է եւ Շամիրամի ծեղքից փունջը իվելով՝ փետում է): Այս էլ ասա, այս էլ Կարծում ես, քեզանից վախեցնդ եմ: (Շամիրամը լաց է լինում: Զանգ: Աշակերաները աղմկելով ներս են թափում եւ իրար հրելով տեղերը բռնում: Շամիրամը շարունակում է հեծկլտալ):

### ՏԵՍԱՐԱԿԱՆ VII

ՆՈՅՆԵՐ, ԱՇԱԿԵՐԾՆԵՐԻ եւ ԾՄՆԻԿ.

**ՕՆՆԻԿ.** (Ներս մտնելով) Տղերք, թւաքանութեան ուսուցիչը ծառայ է ուղարկել, որ հիւանդ է ու այսօր չի պարապի...

ԱՇԱԿԵՐԾՆԵՐԻՑ ՇԱՏԵՐԾ և մանաւանդ ՄՈՒՇԵՂ. — Ուսանա... կեցցէ... (Մէկը սկսում է սեղանին թմբկահարել շորջպար, մի քանի աշակերտ զուրս են զալիս պարելու, մի երկուան էլ բերանով դուրս են ածում: Շամիրամը հեծկլում է):

**ՕՆՆԻԿ.** Լուեցէք, լուեցէք: Այս ի՞նչ է: (ականջները փակում է. Ներս է մտնում վարժուին):

### ՏԵՍԱՐԱԿԱՆ VIII

ՆՈՅՆԵՐ եւ ՎԱՐԺՈՒՀԻՆ.

**ՎԱՐԺՈՒՀԻՆ.** Այս ի՞նչ աղմուկ է: Զէք ամաչում: (Բոլորն էլ փախչում են տեղերը: Մուշեղը թուշում է նստարանի վրայից, իր տեղը կանգնելու համար): Ո՞վ էր պար գալիս:

ԱՄԵՆ ԿՈՂՄԻՑ. Մուշեղը, Մուշեղ...

**ՕՆՆԻԿ.** (Բարձրածայն) Ոչ, օրիորդ: Բոլորն էլ աղմուկ բարձրացրին, երբ ասացի որ ուսուցիչը հիւանդ է... Մենակ Մուշեղը չէր:

**ՎԱՐԺՈՒՀԻՆ.** Նստեցէք: (Դիմելով Շամիրամին): Իսկ դու ի՞նչ ես լաց լինում...

**ՄՈՒՇԵՂ.** (Մէջ մտնելով) Օրիորդ ջան, Շամիրամը ձեզ համար մի սիրուն փունջ էր բերել (Մուշեղը ծածուկ բռունցը է ցոյց տալիս), իսկ տըղաները ձեռքից խլեցին ու գգգեցին...

**ՎԱՐԺՈՒՀԻՆ.** Դու պէտք է միշտ ուրիշի տեղ պատասխանես ու խաբար տան: Շամիրամին էի հարցնում: Լաւ է, Շամիրամ, լաց մի լինի: Շատ շնորհակալ եմ որ ինձ համար ծաղիկներ էիր բերել: Տղաները զիտես որ կուել են սիրում (Աստղիկը մատ է բարձրացնում իբր թէ ուզում է էլլի մի բան ասել): Աստղիկ, երկի էլլի մէկի մասին մի բան պիտի յայտնես: Թող, բաւական է: (Աստղիկը զուխը ցած է զցում: Մուշեղը զաղանի ջզրացնում է «հէ, հէ»): Երեխաներ, թւաքանութեան ուսուցիչը չի եկել, ես վոքրերի հետ դառ ունեմ, տեսէք՝ որ էլ աղմուկ չը լսեմ: Մի խնդիր կը տամ, բոլորդ էլ լուծեցէք: Ով կը վճռի վերջացնի, կարող է հանգիստ դուրս գնալ ու պարտէզում խաղալ, միայն թէ տեսէք, ուրիշ գասարաններին չը խանգարէք: Աւշագրութիւն: (Կարդում է զրբից) «Խանութում 16 Փունտ ալիւրը խառնեցին 17 Փունտ ալիւրի հետ: Առաջին տեսակի գրւանքան արժէր 4 կ., իսկ երկրորդինը 5 կ.: Ամբողջ ալիւրը ծախեցին այնպէս, որ սատցան 16 կոպ. օգուտ: Քանիսով ծախեցին ալիւրի գրւանքան»: Մուշեղ, աղա եկ գրատախտակի մօտ ու կրկնիր խնդիրը:

**ՄՈՒՇԵԴ.** (Գալիս է զբատախտակի մօտ. կակագելով) **ՄԻ** խանութում... երկու տեսակի ալիւր: **ՄԷԿԻԾ** առան 16 գրւանքայ, գրւանքան... արժէր... (կանգնում է):

**ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՑ ՄԷԿԸ.** (թելադրելով, կամացուկ) **ՈւԹԸ...** **ուԹԸ...**

**ՕՆՆԻԿ.** (կամացուկ) Ի՞նչ ես սխալացնում...

**ՄՈՒՇԵԴ.** **ԱՐԺԷՐ...** (դէս ու դէն է նայում):

**ՏԻԳՐԱՆ.** (մատներով վարժուհուց ծածուկ ցոյց է տալիս շորս):

**ՄՈՒՇԵԴ.** Զորս կոպէկ... իսկ միւս տեսակի գրւանքան... արժէր վեց կոպէկ:

**ՎԱՐԺՈՒՀԻՆ.** (ուղղելով) Հինգ կոպէկ:

**ՄՈՒՇԵԴ.** Հինգ կոպէկ: **ՄԻՒՍ ՏԵՍԱԿԻԾ ԷԼ Առել էին...** (կրկին կանգնում է)...  
ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՑ ՄԷԿԸ. (կամացուկ թելադրելով) Քսան... Քսան...

**ՄՈՒՇԵԴ.** Քսան...  
ՕՆՆԻԿ. Օրիորդ, դիտմամբ այստեղից շփոթեցնում են:

**ՎԱՐԺՈՒՀԻՆ.** Տիգրան, ի՞նչքան գրւանքայ:

**ՏԻԳՐԱՆ.** Տասն և եօթը:

**ՄՈՒՇԵԴ.** Տասն և եօթը: Ծախեցին և օգուտ ստացան...

**ՎԱՐԺՈՒՀԻՆ.** 16 կոպէկ: Քանիսով էին ծախում ալիւրի մի գրւանքան: Գրիր թւերը գրատախակի վրա:

**ՄՈՒՇԵԴ.** 16-ը 4 կոպէկով, 17-ը 5 կոպէկով, 16 կոպէկ օգուտ ստացան:

**ՎԱՐԺՈՒՀԻՆ.** Զարութիւն անելում վարպետ

ես, տեսնենք՝ խնդիրը ի՞նչպէս ես լուծում: Դուք էլ լուծեցէք ձեր աետրակներում: Օննիկ, յետոյ տետրակները կը հաւաքես և կը բերես ուսուցչանոց: Տեսէք, որ էլ ազմուկ չը լսեմ (դուրս է զնում):

### ՏԵՍԱԿԱՆ IX

ՆՈՅՆԵՐ առանց ՎԱՐԺՈՒՀՈՒ:

(Մի փոքր լութին. աշակերտները զլովները կրացած ու երբեմն միմանց տետրակների մէջ նայելով աշխատում են: Մուշեղը խզմզում է զրատախտակին):

**ՅԱԿՈԲ.** Հը, Մուշեղ, քրտնեցիր:

**ՄՈՒՇԵԴ.** Վճռում ես վճռիր, այս կողմն ի՞նչ ես նայում:

**ՇԱՄԻՐԱՄ.** Վախում ես որ կարտազրենք (բոլորը ծիծաղում են):

**ՕՆՆԻԿ.** Հանդիսա թողէք նրան, Քիչ մնաց ել սիսալէի:

**ԱՍՏՂԻԿ.** Ես այս բոպէիս կը վճռեմ, այս բոպէիս:

**ՏԻԳՐԱՆ.** Տղէրք, 4 անգամ 16 քանի է:

**ԱՍՏՂԻԿ.** Զասէք, չասէք, թող ամեն մէկը ինքը վճռի: Թէ չէ կերթամ օրիորդին կասեմ:

**ՏԻԳՐԱՆ.** Խաբարբան:

**ԱՍՏՂԻԿ.** Իսկ դու... իսկ դու...

**ՕՆՆԻԿ.** Ես վերջացրի...

**ԱՍՏՂԻԿ.** Այս բոպէիս, այս բոպէիս ես էլ եմ վերջացնում, Օննիկ, ապա ցոյց տուր՝ ի՞նչպէս ես վճռել:

ՏԻԳՐԱՆ. Ցոյց չը տաս, ցոյց չը տաս: Թող  
ինքը վճռին  
ԱՍՏՂԻԿ. կարծում ես՝ ինքս չեմ կարող,  
ի՞նչ է: Այս բոպէխա, այս բոպէխա...

ՏԻԳՐԱՆ. (ժաղղելով) Այս բոպէխա, այս բո-  
պէխա...

ՅԱԿՈԲ. Մուշեղ, բաներդ ի՞նչպէս են...  
(Մուշեղը յուսահատական շարժում է անում):

ՕՆՆԻԿ. Գամ օգնեմ:

ՄՈՒՇԵՂ. Տեղդ կաց:

ԱՍՏՂԻԿ. Օննիկ չօգնես: (Կամացով ական-  
ջին) Մուշեղը քո տետրակը այսօր կեղաստեց:  
Տես: (Մուշեղը չարափնդաց կողըով նայում է):

ՕՆՆԻԿ. Ո՞ր տետրակս: (Հանում է տետրակ-  
ներս եւ սկսում է մէկ մէկ թերթել). Վայ, այս  
ի՞նչ է: Հայերէն տետրակս այս ի՞նչ է դառել:

ԱՍՏՂԻԿ. Մուշեղն արաւ, ես ինքս տեսայ:  
Առաւօտեան վաղ ներս վագեց ու խազխզեց:  
Գնանք, գանգատւենք տեսչին, թողլաւ պատժի:  
Նախանձից արաւ: Ոհ, նա քեզ շատ է նախան-  
ձում:

ՕՆՆԻԿ. (վճռաբար) Ոչ, ես չեմ գանգատւի:  
Տանը նոր տետրակի մէջ կարտագրեմ: (Մուշեղը  
շփոթած է):

ԱՍՏՂԻԿ. (վազում է Մուշեղի մօտ) Հէ, ես ա-  
սացի՞ Օննիկին որ նրա տետրակը խազխզեցիր...  
(դրսից լսում է ծառայի ծայնը):

ԾԱՌԱՅ. Էս մվ է շշօտկու կոթը կոտրել.  
կապկարածներ:

ՏԻԳՐԱՆ. (կամացով Յակոբին) Բանը բաց-  
ւում է:

ԾԱՌԱՅ. (լուսամուտի ետևից): Ծափ բունը մվ  
է քանդել: Էսպէս էլ կրակի:  
ԲՈԼՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ. Ո՞ր բունը, ի՞նչ բու-  
նը (վեր են թոշում տեղերից ու խոնամուտի  
մօտ):

ԾԱՌԱՅ. Ծափ վրայի ծափ բունը մվ է  
քանդել: Մէկ գնամ տեսչին յայտնեմ: Էս փէտի  
կոթով ամենքիդ ծեծել տամ:

ՏԻԳՐԱՆ. Շատ մի բղաւի: Քո կարօն է  
քանդել, ուզում ես հիմա աշակերտներիս վրա  
դնել: Աւելի լաւ է քո տղիդ խրատես:

ԲՈԼՈՐԸ. Քո կարօին խրատիր, կարօի հո-  
գին հանիր...

ԾԱՌԱՅ. Տօ, անհոգիներ, իմ կարօին երբ  
տեսաք:

ՅԱԿՈԲ և ՏԻԳՐԱՆ. Այսօր առաւօտ, մեր աչ-  
քովը տեսանք:

ԾԱՌԱՅ. Այ գուշ, ստախօսներ: Իմ կարօն  
երէկ ճաշից յետոյ գիւղը գնաց, նա մրտեղից  
կարող էր էսօր բունը քանդել (հարեւան սենեա-  
կից երեսում է վարժունու զրովսը):

ԾԱՄԻՐԱՄ. Օրինրդը, օրինրդը... (բոլորը վա-  
գում են իրենց տեղերը):

ՎԱՐԺՈՒՀԻՆ. Այդպէս էք խնդիրը վճռում,  
համ համարտ նստեցէք ու պարապեցէք: Մու-  
շեղ, դու էլ շուտով վերջացրու (հեռանում է):

ԱՍՏՀԻԿ. Ես այս բոպէիս, այս բոպէիս կը վերջացնեմ: Շամիրամ, օգնես:

ՇԱՄԻՐԱՄ. Սպասիր, ես էլ եմ սխալւել:

ՅԱԿՈԲ. (կամացուկ) Տիգրան, շուտով բունը տանենք պարտէզում պահենք, թէ չէ կը դան մեզ մօտ կը գտնեն: (Երկուսն էլ դուրս են թռչում պատուհանով: Մուշեղը անհանգիստ է):

ԱՍՏՀԻԿ. Շամիրամ, տես, տես, ի՞նչպէս փախան:

ՕՆԻԿ. (մօտենալով Մուշեղին) Շուտով վերջացրու, այս բոպէիս դանզը կը տան: Լաւ չէ որ չը վճռես (սկսում է կամացուկ բացատրել: Մուշեղը մերենարար գրում է):

Աշակերտներից երբեմն մէկը, երբեմն միար վճռեցի... Դուքս եկաւ..., Եյ տղերք, պատասխանը հինգ է:

ՇԱՄԻՐԱՄ. (ծափ տալով) Ես էլ գտայ... հինգ է, հինգ:

ԱՍՏՀԻԿ. Ես էլ... այս բոպէիս, այս բոպէիս: Առաջին հարցը մըն է: (Յակոբն ու Տիգրանը ներս են թռչում պատուհանով եւ նստում իրենց տեղերը): Սպասեցէք, սպասեցէք, տեսուչը որ հարցնի, ես բոլորը կասեմ: Ես ու Շամիրամը հօտեսանք:

ՏԻԳՐԱՆ ու ՅԱԿՈԲ. Ապա ասել էք: Ձեր օրը կը տեսնէք:

Երեխաներից մի բանիսը. Յակոբ, Տիգրան, ձեր բանը կը մինի... (Մտնում է տեսուչը. բոլորը ոտքի են ելնում: Օննիկը զնում է տեղը):

## ՏԵՍԱԲԱՆ Խ.

ՆՈՅՆԵՐ, ՏԵՍՈՒՉ ու ՃԱՌԱՆ

ՏԵՍՈՒՉ. (իշխան) ՆԱՄԵՑՔ: Ծառան ասում է որ թոչնի բունը քանդւած է և խոզանակի կոթը կոտրւած: Կարօն այդ չէր կարող անել. երէկ նա գնացել է զիւղը, Ուրեմն ձեզնից մէկն ու մէկն է եղել: Ձեզ հազար անգամ ասել եմ որ բներին ձեռք չը տաք և դպրոցական իրերը չը փչացնէք: Ո՞վ է արել այդ: (Հնդհանուր լութին: Աստղիկն ու Շամիրամը իրար թերվ բրդում են թէ «ասա», բայց նայում են Տիգրանի ու Յակոբի կողմն ու լուս): ՕՆՆԻԿ, ո՞վ է արել:

ՕՆԻԿ. (վեր կենալով) Ես չը գիտեմ. ես ուսուցչանոցումն էի:

ՅԱԿՈԲ. Իսկ առաւօտը դու չէիր որ կամեցէլ էիր բունը քանդել և մեզ վրա դնել:

ՕՆԻԿ. (զարմացած) Ե՞ս:

ՏԵՍՈՒՉ. ՕՆՆԻԿ, մի՞թէ դու...

ՄՈՒՇԵՂ. (մէջ մտնելով) Պարոն տեսնել...

ՏԵՍՈՒՉ. Ի՞նչ է:

ՄՈՒՇԵՂ. (մի քիչ լութինից յետոյ. յուզած) ՕՆՆԻԿը չի քանդել բունը... Բունը ես քանդեցի (Հնդհանուր շփոթութին եւ զարմանը):

ՏԵՍՈՒՉ. (Շեշտակի նայելով Մուշեղի աչքերին) Դժւ քանդեցիր:

ՄՈՒՇԵՂ. Այս, ես. ուզում էի ՕՆՆԻԿի վրա դնեմ որ պատժւի...

ՕՆԻԿ. Ի՞նձ վրա: Ինչու: (Մուշեղը լուսաւ, Տեսուչը երկար նայում է Մուշեղի պեսին):



ՄՈՒՇԵՂ. ՆԵՐԵցէք, պ. տեսուչ, ես վատ արի:  
Էլ երեք չեմ անի:

ՏԵՍՈՒԹՅ. (մի փողը մուածելոց յետոյ) Ազնիւ  
խօսք:

ՄՈՒՇԵՂ. Այս,  
ՏԵՍՈՒԹՅ. Լաւ: Ցիշիր այս օրը: (Զանգ):  
ՕՆՆԻԿ. Զեռքդ, Մուշեղ (սեղմում է նրա  
ձեռքը):

Վարագոյն

» Հ Ա. Ս Կ Ե Բ Ի » ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԵՐ

1. Հեղ Մելիք-Հայկազեան, Քսան օր գետնի տակ 20 կ.
2. Օսկար Ուայլը, Պրինցն ու ծիծեռնակը . . . . . 20 կ.
3. Ստ. Լիսիցեան. Քաջ ձամբորդներ . . . . . 25 »
4. Աթ. Խնկոյեան. Գիւղացին ու արջը . . . . . 25 »
5. Ստ. Լիսիցեան. Քաջ զինուորներ, պիես . . . . . 8 »
6. Ռ. Պատկանեան, Զախու . . . . . 20 »
7. Ստ. Լիսիցեան. Սոված գայլը . . . . . 10 »
8. Կաւողիա Լուկաշեիչ. Քեռի Մկօ . . . . . 20 »
9. Կարլ Էվալդ. Երկիրն ու զիսաստղը . . . . . 12 »
10. Կապուան. Ֆիօրէ փերին, Ասեղ. . . . . 12 »
11. Իւանովիչ. Աւենց Ստեփանը. . . . . 20 »
12. Կ. Լուկաշեիչ. Ծաղիկների մէջ. . . . . 12 »
13. Աթ. Խնկոյեան. Աղլէն ու արջը. . . . . 20 »
14. Նիկ. Մարգարեան. Կենդանիների գոյները . . . . . 15 »
15. Բրես Հարտ. Մլիս. . . . . 12 »
16. Է. Մէտօն-Տօմպոսն Կախականջիկը. . . . . 12 »
17. Գ. Շւաբ. Արագոնաւորդները. . . . . 25 »
18. Աթ. Խնկոյեան. Պապն ու շաղկամը . . . . . 12 »
19. Կար. Միքանեան. Մայրը . . . . . 12 »
20. Յովհ. Թուման. Թէֆ անողին քէֆ չի պակսի. 20 »
21. Պուշկին. Բնած դժխուհին . . . . . 20 »
22. Ն. Մարգարեան. Թէ ինչու համար է ծաղկիլ 20 »
23. Նոյն. Թէ ինչպէս են տարածւում սերմինը . 20 »
24. Կարլ Էւարդ. Տասներկու բոյր. . . . . 10 »
25. Ֆէրրօ. Տօնի համար . . . . . 10 »
26. Աթ. Խնկոյեան. Փեսացու մուկը . . . . .
27. Աթ. Խնկոյեան. Աղլէն ու կոռնկը. . . . . 10 »
28. Մամին-Միքիրեակ. Ծեր ճնճուկը, Ճիճու, Պառաւ Մուանի խոստովանքը . . . . . 12 »
29. Վարդան Վարդանեան. Մաարդն ու Նամարդը 10 »
30. Աթ. Խնկոյեան. Ծիսն ու Որբերը . . . . . 5 »
31. Էրնստ Մէտօն-Տօմպոսն. Կաղլիկ քոթոթը . . . . . 20 »
32. Կ. Մ. Ստանիսլովիչ. Դայեակը . . . . . 20 »

## ՀԱՍԿԵՐ ԱՄԱՍԴՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

1. Ստ. Լիսիցեան. Պահմըտողիկ . . . . . 5 կ  
Ստ. Լիսիցեան. Ազատութիւն . . . . . 5 »
2. Սէյրի. Նոր վարժուհին . . . . . 5 »
3. Սէյրի. Ես իշխան եմ . . . . . 5 »
4. Ստ. Լիսիցեան. Գաղտնիք . . . . . 5 »
5. Ժորժիկ Մանելեան. Փնթի . . . . . 5 »  
Գ. Շահ-Պարոն. Գող—սիրտը գող . . . . . 5 »
6. Տիկ. Մարզարիտ. Դասարանում . . . . . 5 »
7. Յ. Քեօսեան եւ Ստ. Լիսիցեան. Քեռին . . . . . 5 »
8. Գլազունով. Տիկին Միրան, գ. Կ. Միրիանեան 5 »
9. Ստ. Լիսիցեան. Քաջ զինւորներ. . . . . 8 »
10. Կ. Լուկաշենիչ. Ծաղիկների մէջ . . . . . 12 »
11. Փէրոս. Տօնի համար . . . . . 10 »



«Ազգային գրադարան



NL0402444

11106

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.

Պահեստը՝ Թիֆլիս «Գիր» գրախանութում: